

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԴԱՐԳԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ, գրաբառ թարգմանութեամբ Խորէն արքեպ. Նար-Բէյի և Նորայր Բիւզանդացու, յառաջաբանով ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵՆՏԻ.—ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Հրատարակութիւն «Թիֆլիսի ընկ. հայերէն գրքերի հրատարակութեան»։ Ս. Պետերբուրգ, տպար. Սկորոխոգովի։ Քառածալ, ձառ-197 երես, տառ № 12, գինն է ?

Այս տարի հալոց պատմական գրականութիւնը իւր հուցակի մէջ ընդունեց մի նոր լիշատակարան, ալիք է՝ «Յովհաննու Դարդելի ժամանակագրութիւն հալոց»։ Այդ գրքին կցած է մի ընդարձակ լառաջաբան, որի հեղինակն է պ. Կ. Եղեանցը, որին պատկանում է միանդամալն և գրքի խմբագրութիւնը։ Յառաջաբանը ներկայացնում է մի տեսութիւն Կիլիկիայի պատմութեան և նորա եկեղեցական գործերի ու վէճերի։ Իւր լառաջաբանը հեղինակը (պ. Կ. Եղեանցը) վերջացնում է հաղորդելով տեղեկութիւններ Յ. Դարդելի անձնաւորութեան և նորա ժամանակագրութեան գիւտի և հրատարակութեան մասին։

Թէ ո՞վ է եղել Դարդելը, ալիք տեսնում է ընթերցողը հէնց Դարդելի իրա պատմածից. զուլս ճժգ. «Կամի Տեառն 1377 եկին ի Քահիրէ

ուխտաւորք բազումք ասպետք, ազնուականք, զինակիրք և այլք, չորս էր կրօնաւոր ոմն, անուանեալ եղբայր Յովհան Դարդել, ծնեալ է Նստամպ, չաշխարհին Գողղիոյ, և ընկեր նորա եղբայր Անտոն Մոնոպոլեցի, որք երթալին չուստ լերուսաղէմ և ի լեառն Սինայ։ Եւ իբրեւ լուան ուխտաւորքն զի թագաւորն հալոց կալր արգելական ի Քահիրէ, եկին մեծարել զնա ի պատիւ քրիստոնէութեան և էր օրն ալն տօն սրբուհւոյն Մարդարիտայ։ Եւ եղբայր Յովհան մատուց զսուրբ պատարագն առաջի թագաւորին։ Եւ լաւարտել խորհրդոն, աղաչեաց արքայ զՅովհան Դարդել կալ միալ անդէն առ իւր, զի զուրկ էր ի մխլթարութենէ և ոչ ունէր գրաներէց և ոչ զոք խորհրդական, բայց զԱստուած և եթ միալն»։ Յ. Դարդելը տեսնելով թագաւորի թշուառութիւնը

խղճում է նորան և խոստանում է, իւր ուխտագնացութիւնը վերջացնելուց չնտուլ, արձակուրդ խնդրել իւր մեծերից և վերադառնալ թագաւորի մօտ, որ և չաջողում է: Դարդելը մօտ, որ և չաջողում է և մնում թագաւորի մօտ իբրև խոստովանահայր, կատարելով միաժամանակ և խորհրդականի ու քարտուղարի պաշտօն. «Սէ եկաց մնաց անդէն եղբայր Յովհանն Դարդելը քնկերաւն հանդերձ մինչև ցամա 1379 և գրեաց զամենայն զթուղթան, զոր առաքէր թագաւորն յարևմուտս կոյա» (ibid). Նոյն աչդ Դարդելին է, որին Լևոնը՝ դերութենից աղատելու համար շատ և անչափող փորձերից չնտուլ, ուզար կում է Սերոպա քրիստոնեայ թագաւորներից իւր հաւար աղատութիւն աղերսելու (1379 թ.) (գլ. ճիւն): Դարդելը շատ դժարութիւնների է հանգիստ և շատ արգելքներ պիտի չաղթէր (գլ. ճիւն—ճիւն), բայց վերջապէս չաջողեցնում է աչդ գործը՝ աղատում է թագաւորին դերութենից և ստանում է պապից եպիսկոպոսութեան աստիճան «ի վարձ փոխարինի վաստակոցն և վշտաց և բազմաչարչար տուալտանաց, զորս կրեաց նա ի փառս սրբոյ եկեղեցւոյ, ջանահատ եղեալ աղատել զարքայն հալոց» գլ. ճիւն:

Ահա ու՛ է Դարդելը և ինչ գեր է խաղացել Լևոն Վ-ի վերաբերմամբ որի պատմութիւնը և կազմում է նորա վիշատակարանի գլխաւոր աւարկան: Իւր աչդ վիշատակարանը նա դրել է աչն ժամանակաւ Ֆրանսերէն լեզուով, որից և արւած է հակական թարգմանութիւնը. Աչդ թարգ-

մանութիւնը՝ առաջարկութեամբ պ. Կ. Եղեանցի՝ արել է Խորէն արքեպ. Նար-Բէյը և վերաստուգել Նորայր Բիւզանդացին 1886—1889 թ. (չառաջ. եր. հթ.): Բայց թէ բնագիրը ինքը երբ է գտնւել, ամիսս որ պ. խմբագիրը չէ հաղորդում: Աչդ հետաքրքրական չիշատակարանը առաջին անգամ գտնում է Իւլիս Ռոբերը (Ulysse Robert) Դուէի մատենադարանում և աչդ մասին հաղորդում է Լատինական Արևելքի Արխիւի II հատորում, որը հրատարակում էր կոմս Ռիանը. Հակական թարգմանութիւնը դուրս գալուց մի քանի տարի առաջ, բնագիրը տպւում է խաչակրութեան պատմագիրների II հատորում, հակական աղբիւրների շարքում (Recueil des Historiens des Croisades, documents arméniens, t. II). Յառաջ. եր. հթ.

Անցնենք աչմ վիշատակարանի բովանդակութեանը. Դարդելը ինքը մի կալձ չառաջարանի մէջ բաժանում է իւր աշխատութիւնը երկու մասի. առաջին մասը՝ Քրիստոսի ծն. 32 թւականից մինչև 1374, աչսինքն՝ մինչև Լևոն Վ-ի թագաւոր պսակւելը, երկրորդ մասը՝ Լևոն Վ-ի թագաւորելուց մինչև նորա՝ գերութենից ազատւելուց չնտուլ (1382)՝ Պարիզ գնալը (1384), Դարդելի նպատակն է եղել իսկապէս գրել Լևոն Վ-ի պատմութիւնը, որին և նւիրում է իւր Յիշատակարանի աւելի քան երկու երրորդական մասը. հինց աչն է աչդ ժամանակագրութեան արժանաւորութիւնը, որ նորա աչդպիսի մի ահագին մասը գրած է ժամանակակից, իւր ականջով լսած և իւր աչքով տեսած մի մարդ, Բայց իբրև

կաթոլիկ ջերմեռանդ արեղայ. Դար-
դելը ազատ չէ կաթոլիկական տեն-
դենցիալից. այդ տենդենցիան կար-
միր թելի նման անցնում է նորա
զրաժժի սկզբից մինչև վերջը: Այս-
նով իւր ժամանակագրութիւնը Աբ-
գարի թագաւորութենից և պատմե-
լով թէ ինչպէս նա ընդունեց քրիս-
տոնէութիւնը, այլ ևս՝ մինչև Գրի-
գոր Լուսաւորիչը (որին անւանում է
Գրիգոր Նաղարին) և Տրդատ թա-
գաւորը, ոչ մի արժանաւիշատակ
մարդ և անցք չէ գտնում հալոց պատ-
մութեան մէջ. «Սե եղև իբրև միռաւ
արքայն Աբգար, թաղաւորեաց ի
Հալս քղի նորա Սանատրուկ, լամի
Տեառն 70: Սե ալլք զհնա նորա բա-
զումք մինչև ցամն 295 մարդեղու-
թեան Յիսուսի Քրիստոսի, զորոց
լուէ պատմութիւն զի չարարին և
ոչ մի ինչ լիշատակաց արժանի»: (զլ.
բ.) Սե հէնց ալք երկու մեծ մարդ-
կանց էլ շտապում է տանել Հռոմ,
ուր սեղին նոքա զինքեանս ընդ իշ-
խանութեամբ եկեղեցւոյն Հռոմայ,
իբրև որդիք ճշմարիտք և հնաղանդ»
զլ. դ. և ի հաստատութիւն սորա նո-
քա ստանում են Հռոմի հալրապետից
մի ինչ որ է «դաշանց թուղթ» և
վերադառնում իրանց հալրենիքը իբ-
րև Հռոմի եկեղեցու հնաղանդ որ-
դիք: Սե Դարդելը աճուհետև ամեն
լարմար դէպքից և տեղից օգուտ է
քաղում չիչնու և լալտարարելու թէ
հալերը հէնց սկսից կաթոլիկներ են
եղել հնազանդութիւն խոստացած
հռոմէական եկեղեցուն: Վերև բերած
դէպքից չիտոյ Դարդելը անմիջապէս
ալսինքն՝ բաց թողնելով մի ահազին
պատմական ժամանակամիջոց, լառաջ

է բերում մի ալ ֆակտ՝ թէ ինչպէս
Դարդիկ թաղաւորը (1034 թ.)՝ չու-
նաց կալսրի առաջարկութեամբ, Եր-
կու վարդապետ է ուղարկում Կ. Պո-
լիս քրիստոնէական հաւատը քննելու
համար. և երբ ալ վարդապետները
լալտնում են կալսրին թէ՝ «արքայն
հալոց և ժողովուրդ նորա էին ընդ
հնազանդութեամբ եկեղեցւոյն Հռո-
մայ», ալն ժամանակ կալսրը բանտ
է զցել տալիս նոցա և ստիպում է
հնաղանդել չունաց եկեղեցուն, հրա-
ժարելով հռոմէականից: Վարդա-
պետները, իբր թէ բանտումը մեռ-
նելու երկիւղից, ակամայ ընդունում
են կալսրի առաջարկութիւնը, բաց
երբ Դարդիկը իմանում է կալսրի ու-
ղարկած հրովարտակից՝ թէ ալ վար-
դապետները, հրաժարելով Հռոմի
եկեղեցուց, խոստացել են ամբողջ
հալոց ազգի հետ միասին հնազանդ-
ւալ չունաց եկեղեցուն, զնում ներ-
կայանում է կալսրին և ըողոքում է,
ասելով թէ՝ «ինքն և ազգն իւր էին
հնազանդեալք մօրն մերոյ սրբոյ ե-
կեղեցւոյն Հռոմայ ըստ խոստման
իւրեանց» (զլ. դ.):

Ահա թէ ինչ ուղղութեամբ է
սկսում և լառաջ տանում Դարդելը
իւր ժամանակագրութիւնը. նորա կա-
թոլիկական տենդենցիան ընթերցողի
համար պարզ է և ակնհայտ՝ նա բո-
լորովին անդիմակ է և անվարպուր:
Ալ տեսակ վերալերելը դէպի մի
պատմական աշխատութիւն ինքն ըստ
ինքեան մի մեծ պակասութիւն է,
անշուշտ սլաւամարտիկ նախ և առաջ
պիտի լինի անաչառ և ճիշդ: Բայց
մեզ համար Դարդելի ալ պակասու-
թիւնը մի լալտնի աստիճան արժա-

Նաւորութիւն ունի. առաջինը՝ Նա կրկին և կրկին անգամ հաստատում է՝ թէ ինչ աստիճանի կուրութեան կարող է հասնել կրօնական մոլեւաւնդութիւնը. երկրորդ՝ Դարգելը իւր վիշտակարանի մէջ իրանով ներկայացնում է մի պատկեր, մի կենդանի օրինակ. թէ ինչպէս էր վերաբերում դէպի հալեբը կաթողիկ արևմուտքը և նորա եկեղեցին:

Ներելով Դարգելին, իբրև ջերմեռանդ կաթողիկ արեղալի, իւր ալզ ուղղութիւնը, մենք կարող ենք ողջունել նորա աշխատութիւնը, իբրև մի թանգազին վիշտակարան հալեական Կիլիկիայի Լուսինեանների և գլխաւորապէս Լևոն Մ Լուսինեանի պատմութեան:

Դարգելը, իբրև Լևոն Մ-ի խոստովանահայրը և ամենամօտիկ մարդը, հէնց իսկապէս նպատակ է ունեցել գրելու Կիլիկիայի ալզ վերջին թագաւորի պատմութիւնը, որը, ինչպէս վերև ասացինք, բունում է վիշտակարանի աւելի քան երկու երրորդական մասը. մնացած մի երրորդականը կարելի է համարել նախաբան կամ նախապատրաստութիւն. Շաա հաւանական է որ Լևոն Մ-ի մասին նորա աւանդած բաներից շատերը Լևոնը ինքը պատմած լինի կամ գուցէ թելադրած անգամ. Քահիրէում միասին անցկացրած գերութեան երկու երկար տարիները հաւանական են կացուցանում ալդ միտքը:

Ընթերցողը, կարդալով Դարգելի ժամանակագրութիւնը, մի ամփոփ գաղափար է կազմում Կիլիկիայի ալզ վերջին և դժբաղդ թագաւորի

թէ բնաւորութեան, թէ դէպի իւր ժողովուրդը բռնած դիրքի մասին. Լևոնի անկումը ընթերցողը կարող է գուշակել Նոյն իսկ նորա թագաւոր օժակու օրից. երբ որ հալեբը առաջարկում են նորան օժակ իրանց կաթողիկոսի ձեռքով «ըստ հալեական օրինի, որպէս չառաջ ժամանական սովոր էին առնել նախկին թագաւորն հալոց» (գլ. ձա), Լևոնը քաղաքական պատճառներ բերելով՝ իբր թէ, եթէ Նա կաթողիկ եպիսկոպոսի ձեռով օժակ, պապից և արևմտեան թագաւորներից օգնութիւն կը ստանայ, մերժում է հալեբի առաջարկութիւնը, աւելացնելով՝ «ոչ զանխուլ իսկ է ի ձէնջ, տեաւք, զի մենք հնազանդ եմք եկեղեցւոյն Հռոմալ և ունիմք զկաթողիկէ հաւատս, զոր պարտ է և ձեզ ունել» (գլ. ձա): Եւ լետոյ Դարգելը զարմանում էլ է որ հալեբը Լևոնին մատնում են թշնամիներին «թէպէտ և ոչ մի ինչ պատճառս ատելոյ զթագաւորն» (գլ. ձբ). և թնչ բանի կարող էր սպասել Լևոնը, որը մտնում է իւր երկիրը, ելնում է իւր զահը կաթողիկական պրոպագանդայով և ալն էլ շրջապատւած Եւրոպայից եկած կամ բերած բաղդախնդիր վարձկաններով և ասպետներով, որոնց՝ ի դէպ է նկատել հալեբը չէին սիրում. «հալք ոչ սիրեցին երբէք զղինաւորս, որ չալն կուէ լերանց»—վկայում է ինքը Դարգելը (գլ. հդ): Ալսպիսի շլեախտական չարաբերութիւններից լետոյ, զուր է Դարգելը բացատրում Լևոնի մատնելը և անկումը հալեբի տիրանենգութեամբ, անհաստատութեամբ դէ,

պի իրանց թագաւորները և փոփոխամտութեամբ (գլ. ճբ և ալլն), կաթողիկոսի մասնակցութիւնը ալդմատնութեան մէջ ուղղակի ցոյց է տալիս գործի աստառը: Լևոնի խօսքի ալդմատն էլ զուր զուրս եկան. ոչ իւր երկիրը պաշտպանելու ժամանակ օգնութիւն ստացաւ Սերոպակից և ոչ խի աշխատեցին գերութենից ազատել նորան, մինչև որ չ'ուղարկեց Դարդելին, որը երկար ժամանակ և ահագին ջանքեր գործ գնելուց լետոյ միայն կարողացաւ ազատել տալ նորան: Ազատելուց լետոյ էլ Լևոնը ինքը անձամբ գնում է թէ իւր շնորհակալութիւնը լալտնելու և թէ օգնութիւն ինչպիսիք, որ իւր կորցրած գահը վերադարձնէ. շնորհակալութիւնը ընդունում են, հանդէսներ ու տուրներ են սարքում ի պատիւ իրանց սիրելի և բազմաշարշար ազգականին, մեծ մեծ խոստումներ են տալիս օգնութեան և... և ինչպէս հիմա էլ, մեր նոր հէքաթը շատ հին հէքաթ է:

Դարդելի ժամանակագրութիւնը կարգալով, ընթերցողը ոչ միայն Լևոն Մ-ի կամ նորա նախորդների արած-կրածների հետ է ծանօթանում, ալլ նա գտնում է պատասխան շատ ուրիշ հետաքրքրական հարցերի. օրինակ՝ Նիքիկիալի ներքին գրութիւնը, թագաւորի և իւր ժողովրդի փոխադարձ լարաբերութիւնները. Նիքիկիալի արտաքին լարաբերութիւնները:

Դարդելը իւր պատմած անցքերից շատերին մօտ ժամանակակից, շատերին անմիջապէս ժամանակակից միւսներին վկայ և ականատես լինելով,

իւր վիշտակարանը՝ չէ կարելի չը համաձայնել որ՝ ճշմարիտ մեծ արժէք ու գին է ստանում մեր Նիքիկիալի և գլխաւորապէս նորա վերջին թագաւորի պատմութեան համար. միևնոյն ժամանակ՝ նա կարգացում է մեծ հետաքրքրութեամբ ու դարձութեամբ. Հասկանալի չէ միայն թէ ինչու պ. Կ. Նիքանցը թարգմանել է տեւ նորան գրաբառ լեզուով թէ՛ պարզ և զիւրմբունքի, Միալիսի ժամանակ, երբ սեպական կլասսիկները աշխարհաբառ թարգմանելու պահանջ է զգացում, որ ժողովրդի մեծամասնութեան համար նորա մեծ գանձ չը մնան, Փրանսերէնից գրաբառ հալերէն թարգմանել կը նշանակէր ոչ ամենքի ալլ շատ քիչերի համար գրել: Չեմ ուզում ես զորանով ասած լինեմ թէ՛ մենք չը պիտի գրաբառը իմանանք կամ սովորենք. ոչ. ընդհակառակը՝ իմ համոզմունքն է որ մենք մեր գրաբառը աւելի պիտի սովորենք, քան թէ լատիացին լատիներէնը կամ ուսը սլաւոներէնը, որովհետև մեր նոր լեզուն վերջնական կերպարանք, լեքսիկական խտակութիւն դեռ ստացած չը լինելով, շարունակում է սնունդ ստանալ հինից (գրաբառից). բաց ալսպիսի գէպքերում նպատակը լեզու ուսումնասիրութիւնը չէ (պ. Նիքանցի ընդարձակ բառարանը գրած է աշխարհաբառով), ալլ ընթերցողների աւելի լալն չըջան ունենալը:

Ս. Սարգսեանց: